

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՄԱՍՍԱ ՄԱՆՈՒԿ» ՎԻՊԵՐԳԸ

Ա. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արևմտահայ գյուղացին իր բնօրրանում զբաղված էր խաղաղ աշխատանքով, բերք ու բարիքի արարումով: Մինչդեռ հաճախ բռնադատում էին նրա իրավունքները, գերեվարում, մորթում հարազատներին, դժոխքի վերածում հայոց օջախի սրբությունը: Զինավառ հայ Ֆիդայու համար հայրենի լեռների գիրկն էր դառնում անկողին, քարերը բարձ, նա երգվում էր չքնել, չամուսնանալ, զոհվել, բայց փրկել հայրենիքը, հարազատներին: Հայ ժողովրդական այդ հերոսները դարձել էին ցասում, դարձել վրեժ:

XIX դարավերջին և XX դ. սկզբներին Ավետիք Իսահակյանը հայոց ազատամարտերին և նրա հերոսներին նվիրված իր «Հայդուկի երգեր» ընդհանուր անվան տակ գրած բանաստեղծությունները տպագրեց հիմնականում «Դրոշակուս», որոնց մի մասը հանիրավի դուրս է մնացել խորհրդային տարիներին հրատարակված նրա բոլոր ժողովածուներից: «Հայդուկի երգերը» ժամանակին շատ են երգել բարձրիկ լեռներում ծվարած և վաղվա լուսավոր երազներով ապրող ֆիդայիները: Ժողովրդական մտածողության պարզ, զուլալ ու անկեղծ պատկերներում արտացոլվում են հայ քաջորդիների չիկացած զգացումները, սրտերի զարկերը և հոգու կանչերը: Քայլերգային, ուրիշ, խրոխտ ու առնական ակորդներին փոխարինում են եղբրգային թախիծով լեցուն, հուզաշաղախ մեղեդիները, վաղնջական ժամանակներից եկող հայրենասիրական-հերոսական ոգեկոչումները լուսապայծառ շեշտերով ու զրնգուն ձայներով:¹

Որպես ազատության ու հայրենասիրության ոգեշունչ բանաստեղծ՝ Իսահակյանը հենց սկզբից դեմ էր լալկան պոեզիային. նա ուսումնասիրեց տասնյակ փիլիսոփաների երկեր, որոնց հայրենիքի փրկության սոցիալ-քաղաքական ճշմարիտ ուղիներ, Արարատի, Արագածի, Մանթաշի և ժողովրդի հավերժությունը խորհրդանշող շատ սրբությունների հոգևոր ու տոհմիկ արժեքների միջոցով գեղարվեստորեն արտահայտեց հայ ժողովրդի լինելիության և ինքնության գաղտնիքը:

Նա ծրագրում էր գրել «Օրիգինալ գիրք», որի հերոսներն էին լինելու «Դավիթ, Մհեր, Վահագն, Տորք-Անգեղ, Գայլ-Վահան, Աշոտ Երկաթ, Կիլիկիայի քաջերից, Քյոո-Օղլի, Դավիթ Բեկ, Աղասի, Գյուկչեցի Ղազար, Զափուռի տղերք ... Աղբյուր Սերոբ, Գևորգ Զառչ, Անդրանիկ»՝ և հայ ազգային-ազատագրական շարժման ուրիշ նվիրյալներ:

Բանաստեղծի երազներն ու տենչերը դիպչում էին կապարե իրականությանը, թաթախվում հայկական ջարդերի արյան ծովում, փշրվում կամ ստանում արյան շառագույնը: Նա փորձում էր «ապագա հյուսել, աշխարհ ստեղծել», մինչդեռ չէր կարող ցավագին ճշմարտությունը ներկայացնել, քանզի բանտն ու աքսորը պատրաստ էին: Ու հաճախ բանաստեղծը դիմում էր առասպելին, տեսիլին, բալլադին, հեքիաթին,

¹ Տե՛ս Ա.Վազ Խաչատրյան, Ազատագրական պայքարը Ավ. Իսահակյանի քնարերգության մեջ, /Լրաբեր հասարակական գիտությունների, 1985, N 9, էջ 30-39/:

Ա.Վ. Իսահակյան, Հիշատակարան, Ե., 1977, էջ 235:

այլարանությունն ու երազին և դրանց ընձեռած անսահման հնարավորություններով ու ժանրային առանձնահատկություններով էր կարողանում կերտել դյուցազնական ու ժողովրդական հերոսների կերպարներ, ինչպես նաև փառաբանել հայրենիքի գոյատևման հավերժական արժեքները:

Երբեմն էլ վկայակոչվում էին Հեթանոսական-ասպետական ժամանակների ազատության ոգիներն ու քաջագուն մարդիկ՝ նոր ժամանակների հերոսներին ոգեշնչելու, պայքարի տանելու և ցանկալի աշխարհ կառուցելու համար: Կարողում ենք 1896-ի գարնանը Իսահակյանի գրառումներից մեկը. «Հին աշխարհ, խորհրդավոր աշխարհ, մթնոտ ու պայծառ աշխարհ, հրաշալի ու սքանչելի աշխարհ ... խորը և անքննելի աշխարհի «մարդիկ»: Դուք մեզ պես թույլ, վախկոտ, տուփոտ, քնքուշ չէիք. դուք քաջ էիք, ամուր, ահեղ, հսկա. երկիրը ձեր ոտքերի տակ դողում էր, իսկ երկինքը ձեր գլխի վրա պսակի պես շողում ... Զարթոնցեք դուք ձեր գերեզմաններից, թո՛ղ ձեր ուժը փռվի մեր վրա, ձեր խորհրդավորությունն ու ձգտումները, ձեր կրակն ու բոցը թո՛ղ մեզ տիրե, տաքացնե ... Հին աշխարհ, փարթամ, հսկա, ահեղի աշխարհ ...»:

Հեթանոսական այս պոռթկումները, առնական ուժի ու հզորության, ազատ կյանքի ու վայելչության փառաբանումներն ու ոգեկոչումները նորարար բանաստեղծի խիզախումներն էին, որոնց ուժգին արձագանքները հետո լսվեցին արևմտահայ պոեզիայում, դարձան տիրապետող արվեստ՝ «Հեթանոսական հոսանք»: Ավելին, Իսահակյանը այն բացառիկներից էր. որ ոգեկոչեց վաղնջական ժամանակների հզոր ոգիների Ուժը, Զորությունը, Քաջությունը, Կրակն ու Բոցը՝ իր օրերի քաղքենիական, թուլամորթ ու վախկոտ միջավայրը քննադատելու, նորօրյա հերոսներին զինելու, գոտեպնդելու համար: Նա չիդեպականացրեց հին աստվածներին ու նրանց չդարձրեց գրական հերոսներ, ինչպես արեցին այլ բանաստեղծներ: Աստվածային ու առասպելական դյուցազունների ծագումնաբանական հրաշքը նա հայտնաբերեց Ազատն Մասսի՝ իր հայրենիքի ներքին ժայթքումից, այդ օրերի ժողովրդական հերոսների անօրինակ սխրանքներից ու մեր մեծ էպոսի անմահ կերտվածքից: Բնորոշ օրինակ են «Իգիթ Սարդար» /1894/ գրույցը, «Մասսա մանուկ» /1895-1898/ վիպասը, «Ալազյազի մանիներ» /1895-1917/ պոեմը, «Սասմա Մհեր» /1919/ վիպերգը և հայրենասիրական ու ազատասիրական թեմաներով գրված մի շարք բանաստեղծություններ:

Իսահակյանի արխիվում պահվող «Դե Սուլթանն ու Մասսա մանուկը - Հայ գուսանի վիպասը» նվեր Ավ. Մալ-ի /Ավետիք Մալոյան - Ա. Խ/ անմահ հիշատակին»³, ընդհանուր տեսքով 230 թերթից ավելին է, որի 2-րդ էջում բանաստեղծը գրել է. «Այս էպոսը սկսել եմ 1895թ. հոկտեմբերից, բայց մի ամիս չանցած ընդհատել եմ և նորից սկսել եմ գրել 1897թ. մայիսից և վերջացրել եմ 1898-ի հունվարի 13-ին, գրել եմ Ալեքսանդրապոլում և Ղազարապատում»:

Վիպասի առաջին տարբերակն ըստ բնագրի՝ ունի «Դե-Սուլթանն ու Մասսա մանուկը - Հայ գուսանի վիպասը» խորագիրը: Հեղինակն ունեցել է

³ Նույն տեղում, էջ 231:

⁴ ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ, II -254-261:

⁵ Նույն տեղում, II -254:

⁶ Նույն տեղում, II -257:

նաև «Հայ սուսանի վեպը», «Մասիսի, Մատրոսա Մանուկը» վերնագրերի տարրերակներ: Ավելին, վիպասքի առաջին բնագրի առաջին էջում գրված է՝ «Այժմ օր ապատում և յոթ գիշեր անապատում» նախնական վերնագիրը: Ինչպես վերջինս, այնպես էլ այդ տարիներին /1895-1898/ գրված մի շարք բանաստեղծություններ /«Զյունն իջեր, դիզվեր...», «Դառնանք ու պագինք...», «Ավա՛ղ, ավա՛ղ, Հայոց աշխարհ...», «Մայրի՛կ, ինչու՞ Արաքսն էսպես ...», «Ուռնները մազերը կախ ...», «Հազար-Հազար տարիներ...»/ ներհյուսվել ու ամբողջացրել են ասպաստումը:

Առանձին Հատվածներ՝ լրացումներով ու Հավելումներով, տպագրվել են «Դրոշակի» 1899 և 1901 թվականների Համարներում, 1920-ին՝ Արշակ Զոպանյանի «Վերածնունդ» շաբաթաթերթում՝ «Հատվածներ պոեմայից» ենթախորագրով, և 1974-ին՝ վեցՀատորյակի 2-րդ Հատորում՝ «Մասսա Մանուկ» /Հատվածներ անտիպ վիպասքից/ վերնագրով:

Գրականագետ Ավիկ Իսահակյանը, օրերս հրատարակած «Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն» գրքում անդրադառնալով «Մասսա Մանուկ» վիպասքի ճակատագրին, գրել է. «Իսահակյանը օգնական աքսորից առաջ կասկածներ ունենալով, որ իր արխիվը կարող են խուզարկել, քաղաքից մեկնելուց առաջ պոեմի ձեռագիրը թաղում է Գյումրիի Հայրական տան բակում, այնուհետև ձեռագիրը չի Հայտնաբերում: Տարիներ անց այն գտնում է եղբոր որդին՝ Իսահակ Իսահակյանը և իր ձեռքով արտագրում պոեմի մի զգալի մասը /74-119-րդ էջեր/: Իսկ 1908 թվին Իսահակյանը արտագրում է ամբողջը /ԱԻՖ, N II-255/, որը կազմում է 220 էջ: Այդ վիճակում ևս նա երկր լիովին ավարտված չէր Համարում և մտադրություն ուներ մեկ անգամ էլ գրան անդրադառնալ»:

Իսահակյանի գրած այդ «ինքնաստեղծ» ծավալուն /4000 տող/ էպոսին Դերենիկ Դեմիրճյանը ծանոթացել է 1899-ին և 1940-ին գրել. «Ավետիքը գրել էր նախերգանքը, բավական շատ բան նաև բուն մասերից: Կարդաց: Դա մի չքեղ բան էր և կարող եմ վկայել, որ ինչքան Հիշում եմ և չեմ սխալվում, Ավետիքի պոեզիայի մեջ անգամ արտակարգ ու ինքնատիպ երկ էր»: Հիրավի, «արտակարգ ու ինքնատիպ» այդ վիպասքը Հայոց դուցազներգության այն սքանչելի էջերից է, ուր Հայրենասիրական բուռն պաթոսով, շիկացած զգացումներով փառաբանված են Հերոսությունը, Ազատությունը, Իրավունքը, Աշխատանքը և ստեղծագործ Ոգին: Հիանալի են օգտագործված «Մասունցի Դավիթ» էպոսի ավանդույթները, մի նոր ուժով են ներկայացված էպոսային նորօրյա մտածողությունը, արտահայտչամիջոցները, ազգային գարթների ու ազատամարտի ոգեկոչումները: Ինչպես Հայոց փրկության արև Վահագնը, Հայաստանի բանաստեղծական պատկերն էլ կյանք է ստանում ծուխ ու բոց արձակող եղնզան փողից, պոեմի փոթորկուն ներաշխարհի կենսապարզ և հրաբորբ երկունքից:

Դրավիչ է բառ-պատկերի կոյուրիտը՝ տոհմիկ ու Հարազատ գույների լուսեղեն խաղով: «Մասսա Մանուկ» վիպասքը կատարյալ հրավառություն է, տաղանդի չքեղ փայլատակում: Վիպասքի այն Հատվածները, որոնք մեր օրերում առաջին անգամ տպագրվել են և մնացած մասը, որը գտնվում է

7 Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն, Ե., 2000 թիվ. էջ 403:

Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, Հ. 8, Ե., 1963, էջ 201:

Իսահակյանի արվիվում, Հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել նրա գաղափարական և գեղարվեստական ակնհայտ արժանիքների մասին:

... Խնդաղ երեկո է: «Շեն տան մեջ, մեծ օդայում», բոցկլտուն օջախի շուրջ խոսք ու զրույցի են Հավաքվել դյուղի մարդիկ: «Մենակ, անրևներ, ցուպը ձեռին, սազն ուսն կախ» Հայոց Արևմտյան Հատվածից դալիս է «անտուն, անքեն» Դուսանը և նրանց դիմում Հետևյալ խոսքերով.

Բարո՛վ ձեզի, Հայ ախարտի՛ք,
Հանց լեռ ու ժեռ՝ դուք քովերով,
Բարո՛վ ձեզի, Հայ քուրիկեն՛ր,
Հանց զարդ ու վարդ՝ դուք քովերով՝:

Էպոսային այս մուտքից էլ սկիզբ է առնում մերթ գուսանի, մերթ ժողովրդական ասացողի, մերթ էլ բանաստեղծի իրական ու առասպելական, տեսիլային ու երազային խոսքը, որն իր մեջ է առնում Հայոց աշխարհի արյունոտ անցյալը, փոթորկոտ ներկան ու պայծառ ապագան:

Ու պատմում է գուսանը «Դե-Սուլթանի չանչերու տակ» մեր արուն, ավեր ու ավար դառած աշխարհի նահատակների ու կորուստների մասին, պատմում է Հուզիչ, սրտահույզ ու մղկտացնող.

Դուսան էի, գինվոր դառա,
Զինվոր էի, գուսան դառա,
Սազով, սրով ընկա աշխարհք,
Հայոց աշխարհք - մեծ գերեզման՝
Ավեր դաշտեր, մոխիր գեղեր,
Արևոտ գետեր, կովի սարեր,
Հե՛յ վախ, Հե՛յ վախ, իմ սև բախտին,
Սազը չէր թողնում
Կտրիճ դառնայի,
Թուրը չէր թողնում
Դուսան դառնայի ...
Ես էլ չվար, միտքս՝ խոժոռ,
Սիրտս լիքը արուն-արցունք ... /էջ 113/:

Հետևում է Հայոց աշխարհի, «սուրբ տեղերի - փառքի տեղերի», Մասսա Մանուկի՝ Դե Սուլթանին խոցելու, Հալթանակի և բացվող արշալույսի գովքը: Ժողովրդի խնդրանքով գուսանը «Հայոց ազգի փառքն» է պատմում, «սուրբ արունքի, արևծեգի» ասքն է ներկայացնում, երգում է Հայաստանի և Մասսա Մանկան «արմանք - զարմանք» գործերի մասին: Ապա՝

Դառնանք ու պագնենք
Մայրակաթ հողը սուրբ Հայաստանի:
Դու՛ն, ակն - արև աշխարհների,
Որ գրել ես գաճըդ ոսկյա
Ազգերի մեծ ճամփու վրա /էջ 114/:

⁹ Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, Հ.11, Ե., 1974, էջ 112 (այսուհետև այս ժողովածուից բերված մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից):

Ու պանծացվում են Հայաստանի հարատևության ու անսասան հզորության խորհրդանիշները՝ բյուր լեռների թագ ու պսակ, «մեր աշխարհի հզոր գմբեթ»՝ ազատ Մասիսը, Սիփանը, Նեմրուծը, Սասունը, Առնոսը, Տավրոսը և Ամանոսը, «ըմբոստ երասխը», Տղմուտը, Եփրատը, Սիհունը, Զհանը, Արածանին ու Ախուրյանը։ Մեր սրտերից բխած «անմահական հայոց գետեր», որ միշտ «կուլաք հայու վերքերը», «կայծակ կտաք, կրակ կտաք», «կմրրկեք ռիս ու վրեժ»։

Հաջորդում են փառաբանումները Մասսա Մանուկին, Հայ քաջերին, անմահ վալադներին և Փեգազներին, արև մաղթում նրանց, ովքեր բնության դեմ «կրակի պես, հեղեղի պես» թռան, «հուր ու կրակ մտած»՝ սուրբ վրեժի առյուծ դառած՝ մեր աշխարհի պատվի սիրուն գնացին կռիվ։

Զարկին, զարկվան դարե՛ր, դարե՛ր,
Զարկին, զարկվան մինչև այսօր /էջ 118/:

Առանձին դեպքերում Իսահակյանը, ինչպես հետագայում Սիամանթոն, ողբերգից հայրենիքի «աքսորված խաղաղությանը», Հայորդիների նահատակումը, արյան ու հոգեվարքի սարսափները, արյունոտ իրակա-նության ցավատանջ գալարումները։ «Երկիր դրախտավայրը» ծածկվել էր դիակներով, կախաղաններով, գերեվարվել էին քաղաքներ, գյուղեր, «ավեր արին, կրակ տվին, մեր ու մանուկ սրի հանին, ծեր ու տղա հրի տվին»։

Արնան շողերը երկինք առան,
Սև ամպերը դառան կարմիր,
Ալ ծիրանի.
Աշխարհք տեսավ, մարդիկ տեսան,
Շողքն արևի, երկինք բռնած,
Զխղճացին, չցավացին ... /էջ 119/:

«Ժանգը կերավ խոփն ու մանգաղը ... Թույնը մաղեց մեր սրտերը, դարդը սեցուց մեր օրերը, մեր սրտերն արուն ծով կապեց. Հայոց աշխարհքն դառավ Հայուն Սուրբ գերեզման ...»։

Եղբերական պատկերները ցնցում են ընթերցողին, վառում ատելության կրակներ, բորբոքում ցասում ու վրեժ՝ բռնակալների և անտարբեր աշխարհի հանդեպ։ Դրա հետ միաժամանակ բանաստեղծը բացահայտում էր ժողովրդի ներքին հնարավորությունները, մաքառման ոգին՝ վրեժի շանթեր դարձող արցունքների մեջ փնտրելով լուսավոր հանգրվաններ և փրկության ուղիներ։ Դե-Սուլթանը, մոխրի վերածելով Հայաստանը, նրա ժողովրդի մեջ վառել էր կրակը, սարսափի հետ՝ հարուցել վրեժ, կործանման հետ՝ ծնել հերոսներ։ Այս առումով ուշագրավ է առասպելական հերոսի բնույթը։ Դեռ մանկությունից ժամով մեծացող Մանուկ-Հայաստանը՝ հիացմունք ու զարմանք էր պատճառում.

Երկինք տեսավ Մասսա Մանկան՝
Նախանձեց, ասավ ինքն իրեն.
Ա՛խ, աչքունքը իմա լինե՛ր:
Արշալույսը տեսավ ժպիտն էնոր՝
Նախանձեց, ինքն իրան ասավ.
Ա՛խ, Մանկան ժպիտն իմա լինե՛ր:
Արևը տեսավ դեմքը Մանկան՝

Նախանձեց, ինքն իրեն ասավ.

Ա՛խ, էնոր դեմքը իմս լիներ ... /էջ 122/:

Մորն ուղղված Մանկան առաջին հարցումներն ու հետաքրքրությունները վերաբերում են Հայոց աշխարհի ցավին ու ճակատագրին: Արաքսի դառնագին լացը, Դև-Սուլթանի կռած շղթաների շառաչը և Հայոց Ազատության զանդի ղողանջները մեծացնում են Մանուկին, նրա անհանգիստ հոգին լցնում խուռներամ զգացմունքներով.

Զանգն էր մենակ Ազատության

Քար ու քարափ թունդ հանում,

Մանկան սիրտը բոցով վառում.

Ու Մանուկը մինչև ի լույս

Լսեց, ամեն մի ձեն լսեց,

Ու չխփեց աչքերն իսկի.

Լսեց ձեններն ու հասկացավ.

... Ձայներն ամեն տխուր ու վեհ,

Կոչերն ամեն սուրբ ու հզոր ...

Լուսումնութիւն Մանուկն ելավ՝

Տղե՛րք, ասավ քաջերուն,

Էլ սպասելու օր չմնաց,

Գնանք բերենք Հրեղեն ձին,

Գնանք, հանենք Թուր-Հավլունին /էջ 124-125/:

Հիպերբոլիկ պատկերներում բացահայտվում է Ազատության ծնունդը: Թուր-Հավլունու և Թուր-Կեծակի ձեռքբերումով Հայոց ազգը թրով ազատագրելու գաղափարաբանությունը ստանում է էպոսային խորություն և գեղարվեստորեն իրագործվում ժողովրդական մտածողությանը հարազատ, վառ, ցայտուն, քանդակային պատկերների հյուսվածքով:

Ապրես, Մանու՛կ, մեր թե՛-թիկունք,

Իսկ որ դու մեր բախտի տերն ես,

Բարով վայելես Թուր-Հավլունին,

Թուր-Կեծակին, Թուր-Հավլունին,

Մութ՝ երկնուց մեջ կայծակներ են

Կռել-կոփել Թուր-Հավլունին:

Ով որ ունի Թուր-Կեծակին,

Էն կփրկե Հայոց ազգին,

Էլ յաթաղան չի դիմանա ... /էջ 129/:

Գեղարվեստական կառուցվածքի ժողովրդայնության այդ սկզբունքը առկա է նաև Մանուկ հերոսի շրջագայության, ավերակված երկիրը տեսնելու և հուզվելու պատկերում. «Հուզվեց սիրտը, վշտով, լացով ու զայրույթով», հետ կանչեց գաղթողներին, հորդորեց մնալ, կռվել, փրկել հայրենիքը ... Նորից ձին չափ տալով՝ նա «թռավ, հասավ Մասսա գլխին», տեսավ՝ «մեր աշխարհքի էս ափեն մինչ ափն էն յաթաղանն է շողում, նրա տակ տառապում, տանջվում է հայ ժողովուրդը: Մանկան աչքերից վար ընկան երկու կաթիլ արտասուք, «վար ընկան, ապառաժը հալեցին»: Փոթորկվում է նա, լցվում անհուն վրեժով ու ցասումով, հնչեցնում մարտի

Հրավեր, չեփորում Ազատության, Իրավունքի ու Արդարության ղողանջներ: Նրա «արդար, հզոր, ահեղ ձայնը դնում է հեռո՛ւ, հեռո՛ւ ...» ու գնում է մինչև էսօր: Հավաքվում են, այիք-այիք ծով կապում Մանկան յուրջր, վար դնում թրերը և ծովի պես շառաչում: Հնչում են շնորհավորանքի, բարեմաղթանքի ու օրհնանքի ջերմ խոսքեր:

Նշանակալի է, որ Հայոց Մանուկը ժողովրդից կտրված, միայնակ, ինքնագլուխ գործող մի հերոս չէ: Նրա յուրաքանչյուր շարժմանը հետևում է ժողովուրդը և հերոսություն, բարություն ու նվիրվածություն մաղթում-պատգամում «Հայոց Մանուկ, Արև - Մանուկ» հսկային, որը «Մասսա ժեռ աթոռքին կանգնած մի նոր Մասիս էր» «Հանց որ արև» հայրենիքի վրա՝ «Թուր-Հավլունին աջու ձեռքին, աչքն է գցել բյուր ճամփեքին»: Որոտում է Ազատության հզոր Ձանգը՝ «կովի կրակ, խանդ կվառեր, թունդ կելնեին սրտերն արի ...»:

Մանուկը խթանում է իր Հրեղենը՝ երկինք բարձրացնում ամպ ու փոշի, գինավառ քաջերը՝ «փոթորկի պես քար ու քարափ դղորդ գցին ու սլացան», սլացան դեպի կովի դաշտ, «սուրբ առյուծ դառած» հերոսները բռնության դեմ անվախ թռան, հեղեղի ու կրակի պես թռան ... Նրանք թողին «խոփն ու մանգաղ» և սլացան դահիճների, փաշաների, բեկերի, աղաների, չեյխերի. համիդյան ասկյարների դեմ: Իսկ Հայոց աշխարհի սուրբ Հողին, ծնկի եկած ժողովուրդը Մանուկին, Մասսա քաջերին առողջություն, կյանք է մաղթում:

Արև մաղթենք մեծ քաջերուն -
Անդրանիկին ու Վարդանին,
Ջուլալ աղբյուր էն Սերովբին ...
Հազար-Հազար էն կտրիճներուն,
Որոնք համար ու թիվ չունեն,
էնոնք, որոնք աստղերու պես
կցուցլան, անուն չունեն,
Քաջ ու անվախ վալաղներուն,
Գիշերվա աչք էդ քաջերուն,
Որոնք ճամփու լեզու գիտեն,
Ամեն, ամեն ֆեզահներուն,
Որ լույս կուտան ու թիվ չունեն,
Ապրած կենան, կանանչ արև,
Պայծա՛ռ մնան ... /էջ 139/:

Այստեղ և ուրիշ հատվածներում նորովի են ներկայացված ժողովրդական հերոսների արտաքինն ու ներքինը, նրանց բոցավառ ճակատները, հրացայտ աչքերը, կենսակործան ուժերի դեմ ելած նրանց լեռնակուտակ վրեժն ու առյուծային մոնչոցը: Էպոսային հիպերբոլիկ պատկերներում գծագրվում են Հզոր անհատների ողմանտիկական կերպարները, նրանց հերոսական սխրանքները, որոնք լիցքավորված են իրական կյանքում բացառիկ ժողովրդականություն վայելող, հանրահայտ ու սիրված մարդկանց վարքագծով: Իրականի ու առասպելականի միաձուլմամբ, Խահակյանը հասել է գեղարվեստական մեծ ընդհանրացման: Այդ հերոսները Դավթի ժառանգներն են՝ ապառաժի պես ամուր, հերոսական ու հայրենասիրական ոգու կատարյալ մարմնացում: Այսպիսին են Անդրանիկը,

Աղբյուր Սերորր, Վարդանը, Գևորգ Չառլը և Հայկական Հերոսապատումի քաջագունները:

Իսկ Հայոց աղջիկներն ու Հարսները «անուշ ձենով, սրտի սիրով՝ ձեններն ասել ու ճախարակ», երգում են, ՓեղաՀ յարին գովում, ուժ ու կորով, Հերոսություն ու անձնագոհություն ցանկանում: Փափկասուն Հայ աղջիկների մեջ նույնպես բռնկվում է ատելության ու ցասման Հրդեհը, Հայրենիքի բոցավառ սերը փոթորկում է նրանց Հոգին, նրանք տենչում են զորավիգ լինել իրենց եղբայրների ու սիրած տղաների գործին, կռվել և մեռնել նրանց հետ:

ՖեղաՀ յարս ալ ձին հեծավ՝
Առավ մոսինն ու գնաց.
Ընկերներով, բոց երգերով
Արծիվն ելավ ու գնաց:

Էն ամպը չէ՝ սարի վրեն
ԱՀ ու սարսափ որոտաց.
Վե՛ր ել ու տե՛ս, թշնամու դեմ
Ռումբ ու կրակ որոտաց:

Էն ամպի մեջ կայծակներ չեն,
Մեզն ու մռայլ փերթեցին.
Էն ՓեղաՀիք, ախպրտիքս են
Սուր Հրեղեն փարտեցին:

Ա՛խ, երագով Հերիք մնամ,
Երթամ, ընկնիմ կռվի մեջ.
Երթամ, կռվիմ իմ քաջի հետ,
Մեռնիմ սիրուս գրկի մեջ ... /էջ 140/:

Քնարական երգերին Հաջորդում են ռազմի կոչերը, պատրաստ, արթուն ու զինված լինելու պատգամները: Հնչում են արթնացման, զենք ու զրահ Հագնելու Սասնա տան Հերոսների նոր ոգեկոչումները: Պետք է նկատել, որ Արև-Մանուկի ու նրա առյուծաբաշ քաջերի առասպելական կերպարանափոխման Հերոսական նկարագիրը խոր արմատներ ունի, այն գալիս է երբեմնի Հզոր Հայաստանի զինավառ ուժին նվիրված ձոններից, բալլադներից ու մեր անմահ էպոսից:

Էս Մասըսա քաջերն են գլուխ-գլխավորներ,
Թիկունքներին Հայ կտրիճներ, Հայ ՓեղաՀներ,
Ջորքեր ու վաշտ, դաս-դաս, խումբ-խումբ, բանակ-բանակ,

Զիավորներ Հազար, Հազար ու Հազարներ,
Ոտավորներ Հազար, Հազար ու Հազարներ,
Գերանդավորներ Հազար, Հազար ու Հազարներ,
Մուրճ-բաՀով Հազար, Հազար ու Հազարներ,
Իրենց հետ բերում են Հայու Հազար տարվա
Վրեժն ու ցասումներն աՀավոր ... /էջ 142/:

Պետականությունը կորցրած ժողովրդի հրազանքն է եղել ունենալ հզոր բանակ՝ միակամ ու միաձույլ, տեր կանգնել երկրին, նրա իրավունքին ու պատվին: Էպոսային տասնյակ պատկերների մեջ ցույցում է հրազ-նաիրի տեսիլը՝ ծիածանագույն երանգներով, պայծառ, արևային ճաճանչ-ների հրացուքով: Թվում է՝ հեթանոս ժամանակների հզոր ոգին է ճախրում վիպասքի տողերում՝ ամեն անգամ «դառնանք ու պատմենք» օրհներգի մաղթանքներով պանծացնելով Հայոց հավերժական արժեքները, փիլիսոփա-յորեն իմաստավորելով նրա գոյատևման անքննելի գաղտնիքները: Ուժի, Հզորության, Գեղեցկության և Սիրո իսահակյանական փառաբանումները, առասպելական գերհերոսների աստվածացումն ու պաշտամունքը Հայ ժողովրդի համար, առանձնապես այդ տարիներին, ոգեշնչման կարևոր խթաններ էին: Ի հակադրություն օտարածին փիլիսոփայական ուսմունք-ների, ժողովրդական հերոսների դիմանկարը հյուսվում էր Հայոց պատմության փորձի, «այրիացած» Հայաստանին, ժողովրդին փրկության ու լուսավոր ափեր առաջնորդելու կենսական պահանջով: Էլ ովքե՞ր պիտի տեր կանգնեին ու տնօրինեին Հայոց Ճակատագիրը ...

Որքան պայծառ, լուսավոր ու արևային գույներով են պատկերվում արթնացած, ուժ ու զորություն ձեռք բերած Մանուկ Հայաստանի ազատասիրական ոգու ճախրանքները, հայրենիքը փրկելու և անկախության դրոշ պարզելու բուռն տենչերը, այնքան զարհուրելի ու արգահատելի են Դե-Սուլթանի բերդի ու նրա տիրոջ նկարագրությունները.

էն զոռ բերդին, էն կուռ բուրգին,
Բերանը բաց, հանց որ իժ-օձ,
Դժոխքի հնոց, աչքունքը բոց,
Դե-Սուլթանը կայներ է՝
Բորենու մորթին վրեն,
Ալ-մահիկը գլխու վրեն,
Յաթաղանը ձեռքին,
Սիրտը սև թույն,
Ձեռներն՝ արուն,
Դե-Սուլթանը կայներ է,
Զարգանդն աշխարհք բռներ է ... /էջ 142-143/:

Մանուկը նայում է այս ահավոր տեսարանին, նայում հեռվում չողացող Մասիս սարին, լսում Ազատ Զանգի ձայնը, տեսնում Ազատության Դրոշը, փոթորկվում է նրա սիրտը, հրաթև ձիուն ասպանդակում է, բարձրանում «վերև-վերև», կանգնում Դե-Սուլթանի դիմաց և բարձր ու խրոխտ նրան կանչում.

Արունքներու, բյուր մահերու,
Հազար տարվա մեր ցավերու
Դու յաթաղան, դու Դե-Սուլթան,
Ձեն եմ տալիս, չե՞ս ճանաչում Հայ Մանկան,
Թե՛ քնած ես՝ քնեդ զարթնի,
Թե՛ զարթուն ես՝ պատրաստ կայնի,
Թե՛ քունդ կուգա՝ քիչ էլ մնա՝
Ես քեզի մեծ քուն եմ բերել,
Քնես, քնես ու չզարթնես /էջ 143-144/:

Մասունցի Դավթի նման Մասսա Մանուկն էլ կռվից առաջ զգուշացնում է թշնամուն, չիտակ մարտի նետվում: Նենգ, խորամանկ ու նողկալի Սուլթանը իր գողոզ և ամբարտապան խոսքերով ու զազրելի գործողություններով արհամարհում է Մանուկին ու հոխորտում նրա վրա: Մանուկի ու Դև-Սուլթանի հարց ու պատասխանը, Մանուկի՝ հայ քաջերին ուղղված ռազմի կոչը, Սուլթանին սպանելու սխրանքը, հորդանների փախուստը և հայերի հաղթանակը պատկերված են բանաստեղծական վառվռուն գույներով, առասպելական ծավալներով, ազգային, բարոյական նկարագրի շեշտված ինքնատիպությամբ:

- Ազատ Մասրսա Մանուկն եմ ես,
Հայու ծով-վրեժի սուրբ թուրն եմ ես,
Դև, իմացի՛ր, ուխտս է մինակ՝ երկնքի տակ
Կամ դու պիտի լինես, կամ թե չէ՝ ես:
Հետս են եկել հազար ու բյուր ու բյուրավոր
Կտրիճ քաջեր, կայծակեն ու հրեղեն,
Իսկ դուն ո՛վ ես,- դուն հողեղեն,
Չարի, մթի, վիժած բորենի.
Մենք եկել ենք անվախ, անմահ,
Մեր դրոշակն է բոցեղեն՝
- Ազատություն կամ թե չէ մահ, -
Մանուկ ասավ ու Թուր-Հավլունին
Շարժեց թե չէ՝ ամպը-զամպը մեջեն կիսեց.../էջ 144-145/:

Այսպիսով, երկը ստանում է գաղափարապես նպատակասլաց վերջաբան. պարտվում է հազար տարվա հրեշ-թշնամին, և Մանուկի շնորհածով վերադառնում են հաղթանակած քաջերը՝ «Հզոր երգերով, հուր աչքերով», հետները առած աքսորված քաջեր, շղթաները փշրած կտրիճներ, որոնց Մասսա Մանուկը պատգամում է քանդել Դևի բերդը, վարել ու ցանել ազատություն: Մանուկն ինքն էլ հագնում է գյուղացու շորեր, բռնում մահը, «յոթն օր, յոթն գիշեր» վարում են, ցանում «ցորենը ազատության, իրավունքի, արդարության և աշխատանքի»: Ու երգում են բոլորը նոր հորովել.

Անցավ չարը, եկավ բարին,
Բռնությունը մեռավ, ընկավ,
Ազատության արևն հզոր
Դուրս կուգա լուսապսակ,
Կփարատի խավարն ու մութ,
Ժողովուրդներուն՝ լծի տակ մաշած՝
Հոգի կուտա, սեր ու հաց.
Ա՛յ հորովել, հորովել...
Մենք ենք դատում, մենք պիտ լինենք
Մեր քրտնքի տերը արդար.
Կորչի՛ սուրը, կեցցե՛ խոփը,
Կորչի՛ բռունցքը, կեցցե՛ սերը,
Կորչին՝, ջնջվին՝ արար-աշխարհքեն

Լուծ ու շղթա ու զնդան.
Կորչի՛ն, կորչի՛ն
Փաշա, շահ ու փաղիշահ,
Խան, իշխան ու սուլթան.
Մարդ պետք է ազատ լինի ...
Կեցցե՛, կեցցե՛ ազատ մարդը ...
Է՛յ, հորովե՛լ, հորովե՛լ ... /էջ 150-151/:

Ընդհանուր խանդավառության հենքի վրա ծփացող հորովելների, արդարության, աշխատանքի ու ազատության փառաբանումը, հեթանոս ուրախությունները զուգակցվում են գեղեցկության, մարդկային, երախտիքի ու հատուցման, զենքի ու խաղաղության մասին նորովի մտածումներին, Մանուկի արձակած խորիմաստ պատգամ-վճիռներին: Առասպելական հերոսը, քաջերն ու կտրիճները գլխահակ, ծնկի իջած, անգեն, դրոշակները փռում են նահատակների վրա, համբուրում նրանց սուրբ վերքերը, մարմարե ճակատները և սրերը, նիզակները դարձրած պատգարակ, տանում են ընկածներին մինչև սահմանագլուխ:

Ընկեր քաջե՛ր, - Մանուկն ասավ, -
Այստեղ պահ տանք մեր հայրենի, մեր հողերուն
Արևանման մեր ընկերներին՝
Հանց որ պահնորդներ հայու սահմանի /էջ 151/:

Ամփոփում են նրանց մայր հողում, հնչեցնում «քաջերը քաջերին» հրաժեշտի սրտառուչ խոսքը, և հայոց դաշտերի ծաղիկները զարդարում են նրանց գերեզմանաթումբը: Այս պատկերում դրսևորվում են թաղման հանդիսավորության ներքին փայլը և մարտիկների հոգեկան չքեղությունը: Արևանման ազատորդիների անմահության երաշխիքն է նաև ազատագրված Հայաստանի սահմանները հավերժ հսկողության տակ պահելու նրանց օրինակը: Նրանց ներքնաշխարհում ոչ թե լալահառաչ խռովքն է, հառաչանքն ու դամբանականի ողբը, այլ ըմբոստ ոգիների վրեժի ցասումը, բռունցքավելու, հաղթանակի ու երջանկության տենչանքը:

Ժողովրդի դարավոր երազանքի, խաղաղ կյանքի ու հարատևության փիլիսոփայական խոր իմաստ կա Մանուկի հետևյալ խոսքերում:

- Ընկած ձիերն, իմ ախպրտիք,
Թաղեք մեր սուրբ ընկերների ոտների տակ,
Իրենց սարքով,
Սուրբ ընկերների զենքն ու զրահն,
Մեր զենքերն էլ, ամեն, ամեն
Իրեք էնոնց թևերի տակ ...
Մեզ էլ զենքեր հարկավոր չեն,
Էլ այսուհետ մեր զենքերը
Խոփն ու մանգաղ, մուրճն ու քահն են ... /էջ 152/:

Հետաքրքիր է մահվան են դատապարտվում, թաղվում զենքն ու զրահը, պանծացվում խաղաղ կյանքի ու աշխատանքի խորհրդանիշները՝ խոփն ու մանգաղը, մուրճն ու քահն:

Եղբայրական սուրբ ու հզոր գերեզմանը ծածկվում է լեռներից բերված «տիրատեսիլ» ապառաժներով, երկինք խոյանում հայոց սահմանագլխի ուժն ու պատվարը: Մասսա արծիվները բույն են գնում նրա ծերայերում, հայոց սարերից բերված առյուծներն արթուն պահապան են կանգնում, նրանց շիրմի շուրջը խնկարկում են, ջերմացնում ու կարոտավառ խոսքեր ասում Մանուկն ու իր ընկերները:

Հազարերանգ գույների չքեղ հրացուքով է Խաչակյանը պատկերել Հայոց Արշալույսը.

Մեր բիբերը ոսկի դառան,
Դրոշակ ու ձի, սարեր, քարեր
Ոսկի կապած՝ շողշողացին.
Ազատ Մասրսա բանձր գլխին
Արշալույսն հայոց գահ է դրել
Արևելքի ոսկեհուռ դարբասներին՝
Շքեղ, հրաշագեղ վարդ ու պուրպուր,
Հազար-հազար գոհար ու հուր՝
Արշալույսն է ծագել Հայոց -
Մեկտեղ հյուսած հազար տարվա
Մեր չծագած արշալույսներեն.
Արշալույսն հայոց ծով ծիրանի
Երկինք-գետինք լուսավ վառեր,
Հայոց աշխարհ ավմաստ դառեր ... /էջ 154/:

Հորդում է ուրախությունը. շարունակվում են սերն ու խինդը, ծիծաղը, ժպիտները, և մեկ էլ հեռվից լսվում են Դև-Սուպիանի «խուլ նվոցը», հոգեվարքի վերջին ճիչերը ... Ժողովրդի անհանգստությունը փարատելու համար հնչում է Մանուկի հուսադրող ու քաջալերիչ խոսքը՝ համակված Հայոց Արշալույսի պայծառ փառաբանումներով:

Դժվար չէ այս ամենի մեջ տեսնել գաղափարական-հոգեկան մի ներքին հարազատություն Խաչակյանի և Սիամանթոյի միջև: «Մասսա Մանուկը» փաստորեն նախորդել է Սիամանթոյի «Դյուցազնորեն» շարքին: Մի գարմանալի գուգաղիպության ողբերգության, պայքարի և հաղթանակի անցումներն իրենց որոշ պատումներով մոտենում և մաքառման փոխոստ-փայտության հարազատ են դառնում միմյանց: Երկու մեծ բանաստեղծներն էլ ժողովրդի սրտից են քամում իրենց երազանքն ու իդեալները, երկուսն էլ ժամանակի արյունոտ իրականությունն են արտացոլում՝ գալիքի պայծառ լավատեսությամբ, երկուսն էլ հաճախ իրականության նույն փաստերը, նույն հայդուկների սխրանքն են ոսկեչեփորում: Խաչակյանը դիմում է ժողովրդական բանարվեստին, առասպելաբանությանը, Սիամանթոն՝ սիմվոլիզմի նեոռոմանտիկ ձևերին:

Հումանիստական, լավատեսական, երջանիկ ու խաղաղ կյանքի այսպիսի վերջաբանը «Մասսա Մանուկ» վիպերգում և Սիամանթոյի «Դյուցազնորեն»-ում հայրենասիրական ու ազատասիրական ոգու հրավեր են, «նոր աշխարհ» ստեղծելու երազանք:

Արյան գնով ձեռք բերած առասպելական չքնաղ երազի իրական ու բաղձալի տեսիլը ոգևորության ու վերթևածների անսպառ աղբյուր էր, նաիրյան երկրի հավերժության վավերացում: Ժողովրդական բառ ու բանի,

ներանց ճշգրիտ հնչերանգի, տոհմիկ մտածողության ու արտահայտչական միջոցների վարպետ օգտագործումն ու գեղարվեստական ընդհանրացումը «Մասսա Մանուկ» վիպասը բերել են վսեմ պարզության և խորության այնպիսի մակարդակի, որ ընթերցողին թվում է՝ ոչ թե Խաչակյանն է կերտել այդ պոեմը, այլ Հնագույն գուսանները, բանաստեղծները կամ պարզապես ինքը՝ ժողովուրդը: Բնական ու տոհմիկ գծերի լիցքավորումը Հմայիչ ու իմաստայից երանգներ է ներարկել վիպասի հյուսվածքին, այն դասել մեր գրականության բարձր արժեքների շարքը:

ЭПИЧЕСКАЯ ПОЭМА АВЕТИКА ИСААКЯНА „МАССА МАНУК“

А.Х.ХАЧАТРЯН

(Резюме)

Свою самую большую эпическую поэму „Масса Манук“ Аветик Исаакян написал в 1895-99 гг. В ней описаны героические сражения национально-освободительной борьбы армянского народа конца XIX века. В поэме широко использованы традиции и выразительные средства армянского народного эпоса „Сасна Црер“. По своему содержанию поэма глубоко актуальна.

Под образами символических героев поэмы Исаакян имел в виду реальных героев – фидайов освободительной борьбы нашего народа – Андраника, Ахбек Сероба, Вардана, Геворка Чауша и многих других.

В поэме восхваляются героические подвиги Масса Манука во имя освобождения родины, описывается решающая битва Масса Манука с Дев Султаном, его разгром, победа Масса Манука.

Эпическая поэма „Масса Манук“ – одно из лучших поэтических творений Исаакяна. Поэма, с объемом 4000 строк, полностью еще не издана.